ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ՀՀ-ԱՄ-ՆԱԽ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/01 >>

ք. Գյումրի 30 մարտի 2017թ.

ՀՀ Արագածոտն մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Հ. Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բագարանի բարիք>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Մարգարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծահետազոտական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4)պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 5 200 000 (հինգ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով

նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Արագածոտնի մարզպետարան	«Բագարանի բարիք» ՓԲԸ
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ	ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան
Վ.Պետրոսյան 4	ՀՎՀՀ 02235628
ՀՎՀՀ՝ 05004247	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Բանկ՝ ՀՀ Ֆինասների նախարարության գործառնական վարչություն	Հ/Հ 11500498836200
Հ/Հ 900441000990	Տնօրեն՝
Աշխատակազմի ղեկավար՝	
---------- Գևորգյան	---------- Ս.Մարգարյան
	Ստորագրություն
	Կ.Տ

Հայաստանի Հանրապետություն Արագածոտնի մարզպետարան Республика Армения Аragatsotн Marzpetaran Armenia

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՓԱԿ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО CLOSED JOINT STOCK COMPANY

«ԲԱԳԱՐԱՆԻ ԲԱՐԻՔ» «БАГАРАНИ БАРИК» «BAGARANI BARIQ» 02235623

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ REPUBLIC OF ARMENIA

Հավելված 1
30 մարտի 2017թ. կնքված
N ՀՀ-ԱՄ-ՆԱԽ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

11-րդ, 24-րդ. 29-րդ,30-րդ, չափաբաժիններ

ՀՀ	Օբյեկտի անվանումը և արժեքը (ՀՀ դրամ)	Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր
1.	11. Կոշ համայնքի նախադպրոցական մասնաշենքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ՝ 610 000 (Վեցը հարյուր տասը հազար) ՀՀ դրամ 24. Գեղաձորի մանկապարտեզի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ 580 000 (հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ 29. Կաթնաղբյուրի դպրոցի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ, 715 000 (յոթ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ 30. Թաթուլի դպրոցի սպորտային մասնաշենքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ 655 000 (վեց հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ	Նախատեսել աշխատասենյակների և դահլիճի փայտե դռների և պատուհանների փոխում, հատակների վերակառուցում, ներքին հարդարման աշխատանքների իրականացում, տանիքի ծածկույթի վնասված հատվածների փոխում,պատուհանների տեղադրման և պատուհանների շեպերի սվաղի իրականացման աշխատանքներ:
2.	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	<u>Հիմնավորում</u> ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2016 թվականի № 1313-Ն որոշում ՀՀ կառավարության 16 փետրվարի 2016 թվականի № 153-Ն որոշում <u>Նորմատիվային պահանջներ</u> ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգ:
3.	Նախագծման փուլերը	ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 № 273-Ն հրամանի համաձայն: 1. <u>Աշխատանքային նախագիծ</u>

4.	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում՝ ա) ելակետային տվյալներ՝ Նախագծի թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), սույն բնութագրով ամրագրված այլ պահանջներ բ) չափագրություններ գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ ե) ճարտարապետական մաս, կոնստրուկտորական մաս, ներքին ինժիներական ցանցային մաս է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ը) ծավալաթերթ և այլն:
5.	Այլ պահանջներ	Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ, Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության ձեռքբերում: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում << ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն: Նախագծում և ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում էլեկտրոնային տարբերակով: Տեղական կամ համարժեք արտադրության շինանյութերի օգտագործում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 4 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով:

Աշխատանքի կատարման ժամկետը		
	Սկիզբը	Ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 15-րդ օրացուցային օրը ներառյալ:

34-րդ չափաբաժին

Ներքին Սասնաշենի դպրոցի տանիքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ

<<	Օբյեկտի անվանումը և արժեքը (<< դրամ)	Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր
1.	34. Ներքին Սասնաշենի դպրոցի տանիքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ 710 000 /յոթ հարյուր տասը հազար/ << դրամ	Շենքերի տանիքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքների շրջանակներում նախատեսվում է իրականացնել տանիքի ազբոցեմենտյա թերթերի ծածկի քանդում: Տանիքի ծպեղնատոտերի, թեքններ և կանգնակների շարքից դուրս եկած հատվածների փոխարինում: Տանիքի ծածկի իրականացում ձևավոր ցինկապատ թիթեղից փայտե կավարամածի խտացումով
2.	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	<u>Հիմնավորում</u> << կառավարության 29 դեկտեմբերի 2016 թվականի № 1313-Ն որոշում << կառավարության 16 փետրվարի 2016 թվականի № 153-Ն որոշում <u>Նորմատիվային պահանջներ</u> << կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույտվությունների և այլ փաստաթղթերի

		տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգ:
3.	Նախագծման փուլերը	ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 № 273-Ն հրամանի համաձայն: 1. Աշխատանքային նախագիծ
4.	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում՝ ա) ելակետային տվյալներ՝ Նախագծի թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), սույն բնութագրով ամրագրված այլ պահանջներ բ) չափագրություններ գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ ե) ճարտարապետական մաս, կոնստրուկտորական մաս, ներքին ինժիներական ցանցային մաս է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ը) ծավալաթերթ և այլն:
5.	Այլ պահանջներ	Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ, Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության ձեռքբերում: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն: Նախագծում և ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում էլեկտրոնային տարբերակով: Տեղական կամ համարժեք արտադրության շինանյութերի օգտագործում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 4 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով:

Աշխատանքի կատարման ժամկետը		
	Սկիզբը	Ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 15-րդ օրացուցային օրը ներառյալ:

38-րդ,39-րդ,40-րդ,41-րդ,42-րդ,44-րդ,45-րդ,46-րդ չափաբաժիններ

Կարմրաշեն, Սուսեր,Վերին Բազմաբերդ,Դավթաշեն, Հարթավան, Նոր Ամանոս , Աղձք և Քուչակ համայնքների փողոցային լուսավորության կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ

ՀՀ	Օբյեկտի անվանումը և արժեքը (ՀՀ դրամ)	Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր
1.	38. Կարմրաշեն 190 000 /մեկ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ, 39. Սուսեր, 145 000 /մեկ հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ, 40. Վերին Բազմաբերդ 320 000 /երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ 41. Դավթաշեն 255 000 /երկու հարյուր	Նախատեսել ներհամայնքային փողոցների լուսավորության իրականացում նոր լուսավորության սյուների, սարքավորումների և հաղորդալարերի տեղադրումով

	հիսունհինգ հազար / ՀՀ դրամ 42. Հարթավան 255 000 255 000 /երկու հարյուր հիսունհինգ հազար / ՀՀ դրամ 44. Նոր Ամանոս 190 000 /մեկ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ, 45. Աղձք 190 000 /մեկ հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ, 46. Քուչակ 385 000 /երեք հարյուր ութսունհինգ հազար/ ՀՀ դրամ համայնքների փողոցային լուսավորության կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	
2.	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	<u>Հիմնավորում</u> ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2016 թվականի № 1313-Ն որոշում ՀՀ կառավարության 16 փետրվարի 2016 թվականի № 153-Ն որոշում <u>Նորմատիվային պահանջներ</u> ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգ:
3.	Նախագծման փուլերը	ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006 № 273-Ն հրամանի համաձայն: 1. <u>Աշխատանքային նախագիծ</u>
4.	Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում՝ ա) ելակետային տվյալներ՝ Նախագծի թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք), սույն բնութագրով ամրագրված այլ պահանջներ բ) չափագրություններ գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ ե) ճարտարապետական մաս, կոնստրուկտորական մաս, ներքին ինժիներական ցանցային մաս է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ը) ծավալաթերթ և այլն:
5.	Այլ պահանջներ	Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ, Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության դրական եզրակացության ձեռքբերում: Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատում ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակվող համապատասխան տեղեկագրի համաձայն: Նախագծում և ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում էլեկտրոնային տարբերակով: Տեղական կամ համարժեք արտադրության շինանյութերի օգտագործում:

		Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 4 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով:
Աշխատանքի կատարման ժամկետը		
	Սկիզբը	Ավարտը
	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 15-րդ օրացուցային օրը ներառյալ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
Բանկ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ900441000990
Աշխատակազմի ղեկավար՝

------------------------ Ղևոնդյան

ԿԱՏԱՐՈՂ

«Բագարանի բարիք» ՓԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան
ՀՎՀՀ 02235628
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կինյան մ/ճ
Հ/Հ 11500498836200
Տնօրեն՝

------------------------ Ս. Մարգարյան

Հավելված 2
30 մարտի 2017թ. կնքված
N ՀՀ-ԱՄ-ՆԱԽ-ԲԸՀՀՇՁԲ-17/01 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
11	Կոշ համայնքի նախադպրոցական մասնաշենքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	610 000	610 000	610 000	610 000	610 000	610 000	610 000	610 000	610 000	610 000
24	Գեղաձորի մանկապարտեզի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	580 000	580 000	580 000	580 000	580 000	580 000	580 000	580 000	580 000	580 000
29	Կաթնաղբյուրի դպրոցի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	715 000	715 000	715 000	715 000	715 000	715 000	715 000	715 000	715 000	715 000
30	Թաթուլի դպրոցի սպորտայի մասնաշենքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	655 000	655 000	655 000	655 000	655 000	655 000	655 000	655 000	655 000	655 000
34	Ներքին Սասնաշենի դպրոցի տանիքի վերանորոգում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	710 000	710 000	710 000	710 000	710 000	710 000	710 000	710 000	710 000	710 000
38	Կարմրաշենի փողոցային լուսավորության կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000
39	Սուսերի փողոցային լուսավորության կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	145 000	145 000	145 000	145 000	145 000	145 000	145 000	145 000	145 000	145 000
40	Վերին Բազմաբերդի փողոցային լուսավորության կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	320 000	320 000	320 000	320 000	320 000	320 000	320 000	320 000	320 000	320 000
41	Դավթաշենի փողոցային լուսավորության կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	255 000	255 000	255 000	255 000	255 000	255 000	255 000	255 000	255 000	255 000

42	Հարթավան համայնքի փողոցային լուսավորության կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	255 000	255 000	255 000	255 000	255 000	255 000	255 000	255 000	255 000	255 000
44	Նոր Ամանոս համայնքի փողոցային լուսավորության կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000
45	Աղձք համայնքի փողոցային լուսավորության կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000
46	Քուչակի փողոցային լուսավորության կառուցում ծրագրի նախագծահետազոտական աշխատանքներ	-	-	-	385 000	385 000	385 000	385 000	385 000	385 000	385 000	385 000	385 000	385 000
Ընդամենը												5 200 000		

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
Բանկ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ900441000990
Աշխատակազմի ղեկավար՝

---------- Գևորգյան

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Բագարանի բարիք» ՓԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան
ՀՎՀՀ 02235628
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500498836200
Տնօրեն՝

---------- Մարգարյան

Կ.Տ

Հավելված 3
<<_____>>_____20 թ.
կնքված N_____ ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս
_____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	Ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<< >>_____ 20 թ. կնքված
կնքված N_____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն